միջոցին անգամ Գանձասարի կաթողիկոսները ճանաչում էին Էջմիածնի կաթողիկոսների գերագահութիւնը, որովհետև նրանց էին դիմում ամեն տարակոյսների, թիւրիմացութիւնների և վէճերի ժամանակ։ Նոցա անկախութիւնը միայն իրանց հօտի վարչական գործերի վերաբերութեամբ էր։

Էջմիածնի Աթոռն իւր միացնող զօրութեան և բարոյական ազդեցութեան անխափան յարատևութիւնը պարտական է, ի միջի այլոց, ԺԷ դարում նշանաւոր հանդիսացած մի չարք կաթողիկոսների, որոնք յաջորդաբար, իրենց անձնական հեղինակութեամբ գիտեցան պարտուպատշաճ բարձրութեան վրայ պահել այդ Աթոռը մահմեդական բռնութիւնից և կաթոլիկ քարոզիչների որոգայթներից՝ պատսպարելով իրենց հօտը։

Արժ. Աղանեանց Գիւտ քահանայի «Դիւան Պատմութեան Հայոց» վերնագրով հրատարակած ս. Էջմիածնի հայրապետների կոնդակների հաւաքածուն մի զարմանալի տեսարան է պատկերացնում։ Այդ հայրապետները, թէպէտ և ընկճուած իրենց բնակավայրում, երբեմն նոյն իսկ ազատութիւնից զրկուած և յետին կարօտութեան մէջ ընկած, գիտէին դարձեալ ամուր բռնել վարչութեան դեկն իրենց ձեռքում, այնպէս որ ամեն տեղ, ուր վճռելու խնդիր կար, Էջմիածնի կաթողիկոսների բարոյական հեղինակութեան էին դիմում և նրանց հրամանն անսայթաք կատարում Կասպից ծովի ափերից սկսած մինչև Պարսկական ծովածոցը։

1763 թ. Էջմիածնի Աթոռը բազմեց Հայաստանեայց եկեղեցու ականաւոր հովուապետներից մէկը՝ սրբազնագոյն Սիմէոնը։

Նա մի մեծանուն տոհմի չառաւիղ էր և պատանեկան հասակից աչքի էր ընկնում իւր խելքով, հմտութիւններով, հեզ բարքով և քարոզչական տաղանդով։ Դեռ սարկաւագ էր, երբ այլ և այլ պատուէրներով առաքուեցաւ Պարսկաստան, Թիւրքիա, Հնդկաստան և արժանի հանդիսացաւ այն մեծ վստահութեան, որ ընծայում էին իրեն. նրան ամեն տեղ սիրում էին և յարգում, և նա բարի յիշատակ թողեց ազգի մէջ։

Մինչ Սիմէոնը Կ. Պոլսից Էջմիածին գալու վրայ էր, հայրապետական Աթոռը ցակոր կաթողիկոսի մահուամբ թափուր մընաց, և նա Էջմիածին հասնելուն պէս կաթողիկոս ընտրուեցաւ (1763 թ.)։ Ամենուրեք ցրուած հօտի կարիքներին լաւ տեղեակ սրբազնագոյն Սիմէոնը, չնայելով ձախող քաղաքական հանգա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան